ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

26.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/30

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ փաստաբան Ռուստամ Բադասյանի 23.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ փաստաբան Ռուստամ Բադասյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ փաստաբան Ռուստամ Բադասյանը (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 23.02.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի հունվարի 23-ի որոշմամբ «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, իսկ փետրվարի 16-ի թիվ 6 նիստի որոշմամբ հաստատվել է գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որտեղ տեղ են գտել նաև պայմանագիր կնքելու որոշման մասին համառոտ տեղեկատվություններ: Սույնով ներկայացնում ենք մեր դիրքորոշումը պայմանագիր կնքելու որոշման իրավաչափության վերաբերյալ:

1.ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.

1.1. Գնանշման հարցման հանձնաժողովի 26.12.2017թ. թիվ 1 որոշմամբ հաստատվել և հրապարակվել է ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման մասին հայտարարությունը:

1.2. ԵՊԼՀ հիմնադրամի կարիքների համար աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 1-ին մասի 2-րդ գլխով սահմանվել են մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը:

1.3. «Ասատրյանս» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքով և նշված հրավերով սահմանված կարգով հայտ է ներկայացրել գնման ընթացակարգին մասնակցելու համար:

1.4. Գնահատող հանձնաժողովի 11.01.2018թ. թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ նիստում որոշվել է «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող:

1.5. Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, որ բավարար գնահատված հայտեր ներկայացված մասնակիցների թվից առաջին տեղ է զբաղեցրել «Ասատրյանս» ՍՊԸ-ն: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկվել է ներկայացնել ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

1.6. Գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի 23.01.2018 թվականի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ից պահանջվել է ներկայացնել և շտկել հետևյալ փաստաթղթերը՝

(i) Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներից Նաիրա Մխիթարյանը չունի միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորում և չի բավարարում մասնակից կազմակերպության կազմում աշխատանքային փորձի նվազագույնը 3 տարի պահանջը:

(ii) Ներկայացված տեղեկությունների մեջ առկա է հակասություն՝ մասնավորապես տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին հայտարարության մեջ որպես շահառու նշված է Սերգեյ Վարդանի Ասատրյանը, սակայն կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքում Ալբերտ Ասատրյանը նշվել է որպես տնօրեն-բաժնետեր:

(iii) Չի ներկայացվել մասնակցի կրթական համակարգում 5 տարվա աշխատանքային փորձի հիմնավորում:

(iv) Չի ներկայացվել ծառայությունների մատուցման առաջարկվող կարգ (մեթոդաբանություն)՝ աշխատանքների անվանումը, ծախսվող ժամանակը, մեթոդաբանություն:

(v) «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը չի բավարարում հրավերով պահանջվող 10 տարի աշխատանքային փորձի պահանջը:

1.7. Հանձնաժողովը արձանագրել է, որ վերոնշյալ կետերից 2-րդի մասով «Ասատրյանս» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկում, մնացած մասով արձանագրել է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն չի բավարարում հրավերով նախատեսված որակավորման պահանջները, ինչի հիման վրա հանձնաժողովը որոշել է մերժել «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը:

1.8. Միաժամանակ, Հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի 23.01.2018 թվականի թիվ 3 արձանագրության 1.5 կետի համաձայն՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել հաջորդ տեղ զբաղեցնող «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ն և վերջինիս առաջարկվել է ներկայացնել ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանություն հավաստող փաստաթղթերը:

1.9. Գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի 12.02.2018 թվականի թիվ 5 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է մերժել նաև «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ի հայտը՝ նշելով, որ ընկերությունը չի բավարարում հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին (չունի համապատասխան մասնագիտական փորձառություն):

1.10. Միևնույն ժամանակ, «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ չի նախաձեռնվել, մինչդեռ՝ «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ի հայտերը մերժվել են հրավերով նախատեսված որակավորման պահանջներին չհամապատասխանելու արդյունքում, իսկ «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է ակնհայտ անհիմն:

1.11. Գնահատող հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 16-ի թիվ 6 նիստի որոշմամբ հաստատվել է գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, ըստ որի՝ ընթացակարգի արդյունքներով ընտրված մասնակից է հայտարարվել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն, որի հետ պայմանագիր է կնքվելու հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո: Հատկանշական է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի գնային առաջարկը 1,650,000

դրամ էր, «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ի առաջարկը՝ 2,450,000, իսկ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի առաջարկը՝ 7,000,000 դրամ (գերազանցում է առաջին երկուսի առաջարկը համապատասխանաբար 5,350,000 և 4,600,000 դրամով): Անգործության ժամկետ է սահմանվել 20.02.2018-24.02.2018թ:

2. ԲՈՂՈՔԻ ՓԱՍՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ.

2.1.Գտնում ենք, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու որոշումը իրավաչափ չէ և պետք է անվավեր ճանաչվի հետևյալ պատճառաբանությամբ.

2.1.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է այն սկզբունքները, որոնց հիման վրա իրականացվում է գնումների գործընթացը: Այդ սկզբունքներից է, ի թիվս այլնի, «գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը»:

2.1.2. Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

2.1.3. Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ՝

(i) Գնումների գործընթացը պետք է լինի թափանցիկ և հրապարակային,

(ii) Գնումների գործընթացի կանոնները պետք է լինեն միասնական, այն է՝ բոլոր մասնակիցները պետք է մրցեն միևնույն կանոնների շրջանակում,

(iii) Հրավերում չեն կարող նախատեսվել չափանիշներ, որոնք սահմանված չեն Օրենքով, նման չափանիշներ նախատեսվելու դեպքում մասնակիցը պարտավորություն չունի կատարել դրանք,

(iv) Գնումների գործընթացը պետք է անցկացվի համաչափ հիմունքներով, իսկ հրավերը չպետք է նախատես այնպիսի չափանիշներ, որոնք համարժեք չեն, այն է՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից,

(v) Գնումների գործընթացը պետք է կազմակերպվի ոչ խտրական հիմունքներով, իսկ հրավերում չեն կարող տեղ գտնել խտրական չափանիշներ:

2.1.4. Գտնում ենք, որ «ԵՊԼՀ» հիմնադրամի կարիքների համար աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված գործընթացն իրականացվել է բոլոր վերոնշյալ պահանջների խախտմամբ:

2.1.5. Գործընթացի իրականացման ընթացքում, «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ այն չի համապատասխանում Հրավերով նախատեսված որակավորման պահանջներին:

2.1.6. Գործընթացը կազմակերպվել է՝ մասնակիցներին առաջադրելով ընդհանուր 10 տարվա աշխատանքային փորձի, կրթական համակարգում 5 տարվա աշխատանքային փորձի, ծառայությունների մատուցման մեթոդաբանության առկայության, ինչպես նաև աշխատակազմի մասով մասնակից կազմակերպության կազմում նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձի առկայության չափանիշներ: Առաջին երեք չափանիշները որակավորման չափանիշներում ընդգրկված չեն եղել և Ընկերությունը չուներ որևէ պարտականություն այդ մասով, ինչ վերաբերում է կազմակերպության կազմում նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձի առկայությանը, ապա նման աշխատակցի մասին տեղեկությունը ներկայացվել է:

2.1.7. Մինչդեռ, Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը ուղղակիորեն արգելում է այնպիսի չափանիշների սահմանումը, որոնք նախատեսված չեն Օրենքով: Միևնույն ժամանակ, ՀՀ Կառավարության՝ Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-Ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման (այսուհետ՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության, 61-րդ կետի և 64-րդ կետի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հրավերում տեղ գտած վերոնշյալ չափանիշներից և ոչ մեկի սահմանման հնարավորություն Օրենքը և Կարգը չեն նախատեսում:

2.1.8. Հետևաբար, մի կողմից այդպիսի չափանիշների սահմանման հնարավորությունը նախատեսված չէ, ավելին՝ արգելված է Օրենքով, մյուս կողմից այդպիսի չափանիշներն ամեն դեպքում խտրական են և ոչ համաչափ, քանի որ հանգեցնում են մասնակիցների թվի անհիմն կրճատմանը, բարդացնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, միևնույն ժամանակ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

2.1.9. Մյուս կողմից, վիճահարույց չափանիշների գերակշռող մասը սահմանվել են, ոչ թե Հրավերի 1-ին մասի 2-րդ գլխով, որը սահմանում է մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը, այլ Հրավերին կցված հավելված 6-ով նախատեսված ԵՊԼՀ կարիքների համար աուդիտորական ծառայության մատուցման գնման պայմանագրի նախագծի հավելված 1-ով նախատեսված «Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույց» փաստաթղթում:

2.1.10. Այսինքն, որակավորման չափանիշները սահմանվել են Հրավերի 6-րդ հավելվածի 1-ին հավելվածում, որը, այդ փաստաթղթի էությանը ողջամիտ գնահատական տալու դեպքում, պետք է պարունակեր բացառապես գնման առարկա հանդիսացող ծառայությունների բնութագիրը: Հետևաբար, պատվիրատուն որակավորման չափանիշները անկանխատեսելի փաստաթղթում սահմանելով առնվազն գտնվել է անբարեխիղճ: Ավելին, կարելի է նաև ողջամտորեն ենթադրել, որ դրանով պատվիրատուն նպատակ է ունեցել թաքցնելու տվյալ որակավորման չափանիշները, որոնք ի սկզբանե իրավունք չուներ ներառելու Հրավերում: Ընկերությունը այդ չափանիշներին համապատասխանելու պարտականություն չուներ:

2.1.11. Հետևաբար գտնում ենք, որ Օրենքին հակասող որակավորման չափանիշները Հրավերի հավելված 6-ի հավելված 1-ով նախատեսելը հակասում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավաչափ ակնկալիքներին, խաթարում է գնման գործընթացի կանխատեսելիությունը և թափանցիկությունը:

2.1.12. Ելնելով վերոգրյալից հարկ ենք համարում արձանագրել, որ «ԵՊԼՀ» հիմնադրամի կարիքների համար աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված գործընթացը կազմակերպվել և իրականացվել է Օրենքի կոպիտ խախտումներով: Ավելին, գտնում ենք, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը ենթակա էր բավարարման, ինչի արդյունքում «ԲեյքերԹիլլի Արմենիա» ՓԲԸ-ն չէր կարող ճանաչվել հաղթող:

2.1.13. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է (...):

2.1.14. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

2.1.15. Հաշվի առնելով այն, որ գնումների գործընթացը կազմակերպվել է, իսկ Հանձնաժողովի որոշումներն ընդունվել են Օրենքի խախտումներով, պայմանագիրը, որը պատվիրատուն նախատեսում է կնքել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ, կնքման գործընթացի ընթացքում տեղի ունեցած խախտումների հետևանքով չի կարող համապատասխանել օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին և հետևաբար անխուսափելիորեն պետք է ճանաչվի անվավեր:

2.1.16. Հիմք ընդունելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու որոշումը իրավաչափ չէ և պետք է անվավեր ճանաչվի:

2.2. Գտնում ենք, որ Հրավերով նախատեսված պահանջներին «Ասատրյանս» ՍՊԸ-ի չհամապատասխանելու մասին որոշումը իրավաչափ չէ և պետք է անվավեր ճանաչվի հետևյալ պատճառաբանությամբ.

2.2.1.Որակավորման չափանիշները, որոնց Հանձնաժողովը հղում է կատարում հիմնավորելու համար այն հանգամանքը, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն չի համապատասխանում Հրավերով սահմանված պահանջներին, չէին կարող նախատեսվել Հրավերով և չեն նախատեսվել Հրավերի համապատասխան մասում՝ որակավորման չափանիշներում: Հետևաբար, այդ չափանիշներին համապատասխանելու հանգամանքը չպետք է գնահատվեր Հանձնաժողովի կողմից, իսկ Ընկերությունը պարտավոր չէր համապատասխանել դրանց, մյուս բոլոր որակավորման չափանիշներին Ընկերությունը համապատասխանել է:

2.2.2. Այդ թվում, հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը, որն ուղղակիորեն արգելում է այնպիսի չափանիշների սահմանումը, որոնք նախատեսված չեն Օրենքով, ինչպես նաև Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը, 61-րդ կետը և 64-րդ կետը՝ գտնում ենք, որ Հրավերով չէին կարող նախատեսվել՝

1) ընդհանուր 10 տարվա աշխատանքային փորձի,

2) կրթական համակարգում 5 տարվա աշխատանքային փորձի,

3) ծառայությունների մատուցման մեթոդաբանության,

4) աշխատակազմի մասով մասնակից կազմակերպության կազմում նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձի առկայության չափանիշներ (այս մասով համապատասխան ապացույց Ընկերությունը ներկայացրել է):

2.2.3. Հետևաբար, գտնում ենք, որ բոլոր վերոնշյալ որակավորման չափանիշները չէին կարող հաշվի առնվել Հանձնաժողովի կողմից «Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատելիս:

2.2.4. Ինչ վերաբերում է հանձնաժողովի այն հիմնավորմանը, որ հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներից Նաիրա Մխիթարյանը չունի միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորում, գտնում ենք, որ այդ հանգամանքը ինքնին դեռ բավարար չէ արձանագրելու համար, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն չի համապատասխանում Հրավերով սահմանված որակավորման չափանիշներին:

2.2.5. Հրավերում չկա «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով աշխատակազմի նվազագույն քանակի չափանիշ, ինչը ենթադրում է, որ նույնիսկ եթե Նարինե Մխիթարյանը չունի Հրավերում սահմանված որակավորում, «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը բավարարում է Հրավերով նախատեսված որակավորման պահանջները, քանի որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն՝

1. Հայտ ներկայացնելիս հայտարարել է բավարար աշխատանքային ռեսուրս ունենալու մասին, ոչ թե, որ իր բոլոր աշխատակիցները համապատասխանում են «Աշխատանքային ռեսուրսներ» բաժնում սահմանված բոլոր չափանիշներին, հետևաբար չի խախտել իր ստանձնած պարտավորությունը,

2. Ունի պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ,

3. Ունի «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված համապատասխան պահանջներին համապատասխանող մասնագետներ (այսպիսի մասնագետների նվազագույն քանակ Հրավերով սահմանված չէ, հետևաբար նույնիսկ մեկ մասնագետի մասով հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում, մասնակցի որակավորումը պետք է գնահատվեր բավարար):

2.2.6. Այսպիսով, «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը գնահատելիս Հանձնաժողովը չպետք է հաշվի առներ 10 տարվա աշխատանքային փորձի, կրթական համակարգում 5 տարվա աշխատանքային փորձի, ծառայությունների մատուցման մեթոդաբանության առկայության, ինչպես նաև աշխատակազմի մասով մասնակից կազմակերպության կազմում նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձի առկայության չափանիշները: Միևնույն ժամանակ, «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը բավարարում է «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը անկախ այն հանգամանքից, որ Նաիրա Մխիթարյանը չունի միջազգային

ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորում:

2.2.7. Հետևաբար, Հրավերով նախատեսված պահանջներին «Ասատրյանս» ՍՊԸ-ի չհամապատասխանելու մասին որոշումը իրավաչափ չէ, պետք է անվավեր ճանաչվի, իսկ «Ասատրյանս» ՍՊԸ-ն պետք է ճանաչվի ընտրված մասնակից»:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը և 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը, Բողոքաբերը խնդրել է՝

1. Փոփոխել «ԵՊԼՀ» հիմնադրամի կարիքների համար պարտադիր աուդիտի ծառայության նպատակով կազմակերպված «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով հայտարարված ընթացակարգի արդյունքում 16.02.2018թ. ընդունված «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու որոշումը:

2. Փոփոխել գնահատող հանձնաժողովի «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին 23.01.2018թ-ի որոշումը՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ին ճանաչելով ընտրված մասնակից:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ փաստաբան Ռուստամ Բադասյանը և վերջինիս ներկայացուցիչ Անի Վարդերեսյանը:

2. <u>«Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» (ԵՊԼՀ) հիմնադրամը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) էլեկտրոնային գրությամբ «Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ փաստաբան Ռուստամ Բադասյանի կողմից 23.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«1.ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը հիմնավոր կերպով մերժել է «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն չի բավարարել հրավերով նախատեսված հետևյալ պահանջները՝

• «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով ներկայացրած հավելված 5.2–ի հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներից Նաիրա Մխիթարյանը չունի միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական

կազմակերպությունների կողմից որակավորում և չի բավարարում մասնակից կազմակերպության կազմում աշխատանքային փորձի նվազագույնը 3 տարի պահանջը: Չնայած այն հանգամանքին, որ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով հրավերում աշխատակազմի նվազագույն քանակի չափանիշ չկա, սակայն «Ասատրյանս» ՍՊԸ-ն հաշվի առնելով տեխնիկական բնութագրում նկարագրված ծառայությունների ծավալը և գնման ժամանակացույցով նախատեսված ծառայության կատարման ժամկետը՝ հայտի հավելված 5.2-ով ներկայացրել է նշված ծառայությունների մատուցման համար 3 մասնագետ՝ ներառված հիմանական աշխատակազմում, որոնցից ավագ աուդիտոր Նաիրա Մխիթարյանը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Մասնակցին տրվել է շտկելու հնարավություն, սակայն մասնակիցը չի շտկել վերը նշվածը:

• Նշենք, որ հրավերի հավելված 6-ի հավելված 1-ը համարվում է հրավերի անբաժանելի մաս, ուստի մասնակցի կողմից այն կարող էր համապատասխան ժամկետում բողոքարկվել, եթե մասնակիցը գտնում էր, որ այն հակասում է ՀՀ օրենսդրությանը, հակառակ դեպքում մասնակիցը պետք է բավարարի հավելված 6-ի հավելված 1-ի պահանջները:

2. «Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացուցչի՝ փաստաբան Ռուստամ Բաղասյանի կողմից ներկայացրած բողոքի մեջ նշվել է, որ «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 23.01.2018թ. թիվ 3 արձանագրությամբ «Ասատրյանս» ՍՊԸ-ին հնարավորություն է տրվել հայտի հավելված 2.1-ում և հավելված 5.2-ում նշված տեղեկատվությունների միջև եղած հակասությունը շտկելու, այն է՝ տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին հայտարարության մեջ /հավելված 2.1/ որպես շահառու նշված է եղել Սերգեյ Վարդանի Ասատրյան, սակայն կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքում /հավելված 5.2/ Ալբերտ Ասատրյանը նշվել է որպես տնօրեն-բաժնետեր: «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է լրացված հավելված 2.1: Գնահատող հանձնաժողովը պարզել է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն այլ պատվիրատուների հայտարարած մրցույթներում համարվել է հաղթող մասնակից, նրա հետ կնքվել է պայմանագիր, սակայն այդ պատվիրատուներին ներկայացրած իրական շահառուների մասին հայտարարության մեջ նշված է մեկ շահառու՝ Սերգեյ Ասատրյան: Այս փաստերը հաշվի առնելով՝ գնահատող հանձնաժողովը դիմում է Խորհրդին՝ պահանջել «Ասատրյանս» ՍՊԸ-ից ներկայացնելու բաժնետերերի մասին տեղեկատվությունը հաստատող փաստաթուղթ, հասկանալու համար, թե որտեղ է ներկայացվել ճիշտ և որտեղ կեղծ հայտարարություն»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Գոհար Ապրիկյանը:

3. <u>«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ԳԲԽ-ԷՍ-2018/30 բողոքի քննության շրջանակներում որպես երրորդ կողմ ներգրավված «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՆԱԽԱԲԱՆ.

«Ասատրյանս» ՍՊԸ-ն 23.02.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին բողոք է ներկայացրել (այսուհետ՝ Բողոք իր հոմանիշներով) առ այն, որ «ԵՊԼՀ» հիմնադրամի գնահատող հանձնաժողովը 23.01.2018թ. մերժել է «Ասատրյանս» ՍՊԸ-ի ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով պարտադիր աուդիտի ծառայության գնանշման Հայտը՝ Բողոքող կողմից՝ մեջբերում «...պահանջվել է ներկայացնել և շտկել հետևյալ փաստաթղթերը ...(պահանջվող փաստաթղթերի ցանկը թվարկված է Բողոքի 1.6. կետում, որտեղ 5 (հինգ) ենթակետերով թվարկված են անհամապատասխանությունները «ԵՊԼՀ» Հիմնադրամի Հայտին)»:

Այնուհետև, նույն Բողոքից տեղեկանում ենք (տես՝ կետ 1.7), որ «Հանձնաժողովը արձանագրել է, որ վերոնշյալ կետերից 2-րդի մասով «Ասատրյանս» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկում, մնացած մասով արձանագրել է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն չի բավարարում հրավերով նախատեսված որակավորման պահանջները, ինչի հիման վրա հանձնաժողովը որոշել է մերժել «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը»: Ինչպես ակնհայտ է դառնում Բողոքող կողմի Բողոքից, իրենք իրենց ներկայացված պահանջներից բավարարել են ընդամենը Բողոքի 1.6. կետի (i) և (ii) ենթակետերի պահանջները:

ԲՈՂՈՔԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՑԱՌՈՒՄՆԵՐԸ.

Ըստ Բողոքող կողմի, Բողոքի 2.1.1. ենթակետի՝ ««Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է այն սկզբունքները, որոնց հիման վրա իրականացվում է գնումների գործընթացը: Այդ սկզբունքներից է, ի թիվս այլնի, «Գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը»: Ի գիտություն Բողոքող կողմին, պետք է նշենք, որ՝

1. տվյալ պահանջը սահմանված է ոչ թե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում, այլ ամրագրված է նույն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում.

2. Հայտը հրապարակված է եղել www.ARMEPS.am կայքում, որտեղ բոլոր մասնակիցների համար սահմանված են եղել մասնակցության ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ:

Վերոնշված կայքից հստակ երևում է, որ հայտատուն ամբողջությամբ ապահովել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, այն է՝ մասնակիցների համար սահմանել է գնման գործընթացի միասնական կանոններ, դրանով ապահովելով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներ, ինչպես «Ասատրյանս» ՍՊԸ-ի, «Բի-Դի-Օ» ՓԲԸ-ի, այնպես էլ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի համար: Հետևաբար, յուրաքանչյուր մասնակից պարտավոր էր գնումների գործընթացին մասնակցելու ժամանակ ղեկավարվել հայտատուի պահանջներով, այլ ոչ թե առաջնորդվել սեփական ենթադրություններով:

Բողոքող կողմի հաջորդ շեշտադրումը կատարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթներին: Ըստ բողոքող կողմի, Հայտատուն չպետք է սահմաներ չափանիշներ մասնակցի գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված:

Ի գիտություն Բողոքող կողմի պետք է նշենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված են, որ «Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները»: Այդ պահանջները 5-ն են: Հրավերով և տեխնկական բնութագրով սահմանված որակավորման չափանիշները հրապարակվել են www.ARMEPS.am կայքում, որը համաձայն Օրենքի նույն պահանջի դիտվում է հայտատուի բացառիկ իրավունքը:

Խորին հիասթափությամբ պետք է արձանագրենք, որ Բողոքող կողմը չի կարողացել ընկալել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթը: Այն Օրենքում ձևակերպված է հետևյալ կերպ՝

«Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից»:

Օրենքի վերոհիշատակված համապատասխան կետի մեջբերումից հետևում է, որ Հայտատուն իրավունք չունի իր Գնումների Հայտում ներառել այնպիսի պահանջներ, որոնք

չեն ներառված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով (խոսքը վերաբերվում է Օրենքի սույն մասով ամրագրված 5 պահանջներին): Դրանք են՝

«Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ»:

Այդ մասին են վկայում նաև ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշմամբ արձանագրված և Բողոքողի կողմից որպես հիմնավորում բերված Որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը, 61 և 64 կետերի պահանջները:

Ինչ վերաբերվում է Հայտատուի կողմից որակավորումների համար սահմանված պայմաններին, ապա դա բացառապես Հայտատուի բացառիկ իրավունքն է և որևէ Օրենքով կամ ենթաօրենսդրական ակտով չի սահմանափակված կամ արգելված:

Բողոքը հիմնականում ուղղված է Հայտատուի կողմից գնումների որակավորման չափանիշների համար սահմանած պայմաններին: Սակայն Բողոքող կողմին հիշեցման կարգով պետք է ներկայացնեմ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի հոդված 50-ի (Խորհուրդ բողոքարկելու կարգը), 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը, այն է՝ «Գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը», որը չի կատարել «Ասատրյանս» ՍՊԸ-ն:

Ելնելով բոլոր վերոհիշատակումներից և «Գնումների մասին» ՀՀ Օրենքի դրույթների պահանջներից, համարում ենք, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի Բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Վստահեցնում ենք, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն բոլոր առումներով ապահովել է Հայտատուի կողմից առաջադրված որակավորումներին և պայմաններին նախատեսված պահանջները, ուստի «ԵՊԼՀ» Հիմնադրամի գնահատող հանձնաժողովի 16.02.2018թ. թիվ 6 արձանագրությունը, ըստ որի «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն ճանաչվել է հաղթող կողմ, պետք է համարվի վավեր և թողնվի ուժի մեջ:

ՎԵՐՋԱԲԱՆ.

Ինչպես արդեն սույն դիրքորոշման նախաբանում նշել ենք, «Ասատրյանս» ՍՊԸ-ն 23.02.2018թ-ին ՀՀ գնումների բողոքարկման հանձնաժողովին բողոք է ներկայացրել, որ «ԵՊԼՀ» Հիմնադրամի գնահատող հանձնաժողովը 23.01.2018թ. մերժել է «Ասատրյանս» ՍՊԸ-ի ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով պարտադիր աուդիտի ծառայության գնանշման հայտը: Սակայն Բողոքող կողմը իր Բողոքում չի հիշատակել, որ «ԵՊԼՀ» Հիմնադրամի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մեկ օրով կասեցնել 23.01.2018թ. նիստը, հնարավորություն ընձեռելով «Ասատրյանս» ՍՊԸ-ին «... սահմանված կարգով շտկելու առկա անհամապատասխանությունները»: Սակայն, ինչպես պարզվում է «ԵՊԼՀ» Հիմնադրամի գնահատող հանձնաժողովի 23.01.2018թ-ի թիվ 03 որոշման արձանագրության ուսումնասիրությունից, որտեղ մանրամասնորեն թվարկված են Հիմնադրամի գնահատող հանձնաժողովի պահանջները, ինչպես նաև «Ասատրյանս» ՍՊԸ-ի մեկնաբանությունները, ակնհայտ է դառնում, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն չի կարողացել բավարարել Հիմնադրամի գնահատող հանձնաժողովի պահանջները և ակնհայտորեն իր բողոքում խեղաթյուրել է Հիմնադրամի գնահատող հանձնաժողովի աշխատանքը:

ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ.

Անկախ այն հանգամանքից, որ «ԵՊԼՀ» Հիմնադրամի գնահատող հանձնաժողովի կողմից որպես հաղթող կողմ ճանաչվել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն, հանուն գործող օրենսդրության գերակայության, «ԵՊԼՀ» Հիմնադրամի գնահատող հանձնաժողովը գործել է անաչառ, «Գնումների մասին» ՀՀ Օրենքին և բոլոր ենթաօրենսդրական ակտերի պահանջներին համապատասխան»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Փառանձեմ Գևորգյանը և լիազորված ներկայացուցիչ Լևոն Թոփուզյանը:

4. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ փաստաբան Ռուստամ Բադասյանի 23.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 11.01.2018թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի N 2, 23.01.2018թ. ժամը 11:00-ի հայտերի բացման

նիստի N 3 արձանագրությունները, «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի դիրքորոշումը և կարծիքը.

«ԵՊԼՀ» հիմնադրամի կարիքների համար՝ աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտեր են ներկայացրել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն և «Ասատրյանս» ՍՊԸ-ն:

«ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հրավերի գնման պայմանագրի նախագծի թիվ 1 Հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով, ի թիվս այլ պահանջների, սահմանվել են հետևյալ պահանջները՝

Մասնակիցը պետք է ապահովի՝

1. Մասնագիտական հատկանիշներ (աշխատանքային փորձ)

• Մասնակցի ընդհանուր աշխատանքային փորձ - 10 տարի

• Աշխատանքային փորձը կրթական համակարգում -5 տարի

• Աշխատանքային փորձը ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում - 5 տարի

2. Աշխատանքային ռեսուրսներ (առաջադրանքի կատարման համար առաջարկվող աշխատակազմ)

• Անձնակազմի ընդհանուր փորձառությունը-5 տարի

• Անձնակազմի փորձառությունը կրթական համակարգում-5 տարի

• Անձնակազմի որակավորումը ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում-5 տարի(...):

3. Ծառայությունները մատուցման առաջարկվող կարգ (մեթոդաբանություն)

• Աշխատանքների անվանումը, ծախսվող ժամանակը

• Մեթոդաբանություն:

Հանձնաժողովը՝ 11.01.2018թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի N 2 արձանագրության՝

• 3-րդ կետով արձանագրել է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված գնային առաջարկը կազմել է 1,650,000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

• 5-րդ կետով որոշել է «Ասատրյանս» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

• 7-րդ կետով որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնել որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ Հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովը՝ 23.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի N 3 արձանագրության՝

•1.1 կետով արձանագրել է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ Հրավերով նախատեսված փաստաթղթերում բացակայում են, և շտկման կարիք ունեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Ներկայացված Հավելված 5.2-ի հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներից Նաիրա Մխիթարյանը չունի միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորում և չի բավարարում մասնակից կազմակերպության կազմում աշխատանքային փորձի նվազագույնը 3 տարի պահանջը:

2. Ներկայացված հայտի հավելված 2.1-ում և հավելված 5.2-ում տեղեկությունների մեջ առկա է հակասություն՝ մասնավորապես տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին հայտարարության մեջ որպես շահառու նշված է Սերգեյ Վարդանի Ասատրյանը, սակայն կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքում Ալբերտ Ասատրյանը նշվել է որպես տնօրեն-բաժնետեր:

3. Չի ներկայացվել մասնակցի կրթական համակարգում 5 տարվա աշխատանքային փորձի հիմնավորում:

4. Չի ներկայացվել ծառայությունների մատուցման առաջարկվող կարգ (մեթոդաբանություն)՝ աշխատանքների անվանումը, ծախսվող ժամանակը, մեթոդաբանությունը:

5. «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը չի բավարարում հրավերով պահանջվող 10 տարի աշխատանքային փորձի պահանջը:

•1.2 կետով որոշել է կասեցնել նիստը 1 աշխատանքային օրով և առաջարկել մասնակցին սահմանված կարգով շտկելու առկա անհամապատասխանությունները:

•1.3 կետով արձանագրել է, որ.

- 1-ին ենթակետի վերաբերյալ «Ասատրյանս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է Նաիրա Մխիթարյանի աշխատանքային գրքույկի պատճենը, որտեղ բացակայում է որևէ գրառում «Ասատրյանս» ՍՊԸ-ում աշխատելու վերաբերյալ, իսկ միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորման վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի ներկայացվել:

- 2-րդ ենթակետի մասով ներկայացվել է հավելված 2.1 շտկված տարբերակը;

- 3-րդ և 4-րդ ենթակետերի վերաբերյալ որևէ մեկնաբանություն չի տրվել:

- 5-րդ ենթակետի մասով ներկայացվել է գրություն, որտեղ սահմանվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը, սակայն գնահատող հանձնաժողովը գտնում է, որ համաձայն նույն օրենքի 29-րդ հոդվածի, մասնակիցն իրավունք ուներ սահմանված ժամկետում պահանջել հրավերի պարզաբանում, սակայն «Ասատրյանս» ՍՊԸ-ն որևէ պարզաբանում չի պահանջել:

•1.4 կետով որոշել է մերժել «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը՝ հրավերով նախատեսված որակավորման պահանջներին չբավարարելու հիմնավորմամբ:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ «Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց Բողոքն ամբողջությամբ և նշեց, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը մերժելու և «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու որոշումները իրավաչափ չեն և պետք է անվավեր ճանաչվեն, քանի որ, ըստ Բողոքաբերի, «ԵՊԼՀ» հիմնադրամի կարիքների համար աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված գործընթացն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված բոլոր դրույթների խախտմամբ, այսինքն, Պատվիրատուի կողմից հրավերով սահմանվել են որակավորման այնպիսի չափանիշներ, որոնք նախատեսված չեն վերը նշված հոդվածով, խտրական են և էականորեն սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնելով հնարավոր մասնակցի մասնակցությունը գնման գործընթացին, և ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից: Վերը նշվածի կապակցությամբ Բողոքաբերը մատնանշեց Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով նախատեսված՝ մասնակիցներին առաջադրված ընդհանուր 10 տարվա աշխատանքային փորձի, կրթական համակարգում 5 տարվա աշխատանքային փորձի, ծառայությունների մատուցման մեթոդաբանության պայմանները, ինչպես նաև աշխատակազմի մասով մասնակից կազմակերպության կազմում նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձի պայմանը: Միաժամանակ, Բողոքաբերը նշեց, որ մասնակցի որակավորմանը վերաբերող խտրական չափանիշները սահմանվել են ոչ թե Հրավերի 1-ին մասի 2-րդ գլխով, որը սահմանում է մասնակցի որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը, այլ Հրավերին տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով, ինչը հակասում է գնման գործընթացի կանխատեսելիության և թափանցիկության սկզբունքներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

• 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

• 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն նույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ (...) խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը:

Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Կարգի 64-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝ հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների անունը, ազգանունը, որակավորումը, աշխատանքային փորձը, գործատուի անվանումը, ժամանակահատվածը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը:

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, և այլն):

«ԵՊՀ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2.5 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝

- մասնագետների որակավորումը՝ միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորված աուդիտորներ;

- ժամանակահատվածը՝ վերջին 5 տարվա մեջ նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ նշված որակավորմամբ: Մասնակից կազմակերպության կազմում աշխատանքային փորձը նվազագույնը 3 տարի:

- գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ կրթական ոլորտում աուդիտորական ծառայությունների մատուցում:

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ.

• Հրավերով սահմանված «Աշխատանքային ռեսուսներ» որակավորման չափանիշի հիմնավորման համար պահանջվող՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար հիմնական աշխատակազմի մասնագետների թվաքանակ, ինչպես նաև վերջիններիս՝ միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից համապատասխան որակավորման առկայության պահանջ չի սահմանվել:

• «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից հայտի Հավելված 5.2-ով ներկայացվել է կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք, որում նշվել է, որ Ընկերության հիմնական աշխատակազմում ներառված են հինգ մասնագետ:

• Հանձնաժողովը մերժել է «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը՝ հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներից՝ Նաիրա Մխիթարյան, միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից համապատասխան որակավորում չունենալու հիմնավորմամբ:

Խորհուրդը գտնում է, որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից հայտի Հավելված 5.2-ով ներկայացված կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքը համապատասխանում է Հրավերով սահմանված պահանջներին, քանի որ «Աշխատանքային ռեսուսներ» որակավորման չափանիշի հիմնավորման համար պահանջվող՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար հիմնական աշխատակազմի մասնագետների թվաքանակ, ինչպես նաև վերջիններիս՝ միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից

համապատասխան որակավորման առկայության պահանջ Հրավերով չի սահմանվել, հետևաբար այն պետք է գնահատվեր Հրավերի պահանջներին համապատասխանող:

Ինչ վերաբերում է Հանձնաժողովի կողմից «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը մերժելու այն հիմնավորմանը, որ վերջինս չի բավարարում «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման Հրավերով սահմանված պահանջներին, քանի որ «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել մասնակցի կրթական համակարգում 5 տարվա աշխատանքային փորձի հիմնավորումը, ծառայությունների մատուցման առաջարկվող կարգ (մեթոդաբանություն)՝ աշխատանքների անվանումը, ծախսվող ժամանակը, մեթոդաբանությունը, ինչպես նաև «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը չի բավարարում Հրավերով պահանջվող 10 տարի աշխատանքային փորձի պահանջին, ապա Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից նշված պահանջները սահմանվել են Հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 Հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրում, մինչդեռ Հրավերի տեխնիկական բնութագրում Պատվիրատուն պետք է սահմաներ ձեռք բերվող ծառայությունների նկարագիրը, այլ ոչ թե մասնակցին ներկայացվող «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին վերաբերող տվյալներ, ուստի դրանք չէին կարող հանդիսանալ որպես «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին չհամապատասխանելու պատճառաբանությամբ մերժելու հիմնավորում:

Հաշվի առնելով վերը նշված փաստական հանգամանքները՝ Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը մերժելով, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից 23.02.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:
2. Փոփոխել «ԵՊԼՀ» հիմնադրամի կարիքների համար պարտադիր աուդիտի ծառայության նպատակով կազմակերպված «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման ընթացակարգի արդյունքում 16.02.2018թ. ընդունված «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները:

3. Փոփոխել գնահատող հանձնաժողովի «Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին 23.01.2018թ. որոշումը՝ «Ասատրյանս» ՍՊԸ-ին ճանաչելով Ընթացակարգի ընտրված մասնակից:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**